ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԼԵՐՄՈՆՏՈՎՈՅԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

« 19 » մարտի 2012 թ. N 30

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
Պ-Ն Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Կից ներկայացնում ենք Լերմոնտովո համայնքի ղեկավարի թիվ 10 , 11 Որոշումները :

Համայնքի ղեկավար Է.Չախալյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԼԵՐՄՈՆՏՈՎՈՅԻ ԳՅՈՒՂԱՊԵՏ

«7» 03 2012 թ.

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 10

## ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ և ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Յասմիկ Արշալույսի Սահակյանը դիմել է գյուղապետարան իրեն պատկանող բնակելի տունը կից հողամասի հողօգտագործման իրավունքը ձևակերպելու խնդրանքով : Յասմիկ Արշալույսի Սահակյանը փաստացի զբաղեցնում է 2000 քմ հողամաս , որը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1;2,3 ենթակետերի սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում՝

1. Ղեկավարվելով «ՀՀ հողային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 8-րդ կետով ՝ վերականգնել Յասմիկ Սահակյանի նախկին հողահատկացման հիմքերը 2000 քմ մակերեսի չափով ,որը օրենքի ուժով սեփականության իրավունքով փոխանցվում է Յասմիկ Սահակյանին
2. Հողամասի սահմանները որոշվում են գյուղապետարանի կողմից 2000 քմ մակերեսով հողամասի համար տրված գլխավոր հատակագծով :
3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Վանաձորի տարածքային ստորաբաժանումում :

Համայնքի ղեկավար Է.Չախալյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԼԵՐՄՈՆՏՈՎՈՅԻ ԳՅՈՒՂԱՊԵՏ

Հայաստանի Հանրապետության
Լոռու մարզի Լերմոնտովո համայնք
հեռ. (0322) 6 85 70

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 16 » մարտի 2012 թ-ի N 11

## ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Ընտրական օրենսգրքի 16-րդ հոդվածի 1-ին մասով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

ՀՀ Ազգային ժողովի 2012 թ-ի մայիսի 6-ին կայանալիք հերթական ընտրությունների անցկացման համար Լոռու մարզի Լերմոնտովո համայնքում 31/17 տեղամասային կենտրոն սահմանել համայնքի գործող Ակումբի շենքը /հասցե՝ 2փողոց թիվ 4 /:

Լերմոնտովո համայնքի ղեկավար Է.Զախարյան

2012թ. մարտի 16
գ.Լերմոնտովո